600.0027.08.02.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 փետրվարի 2017 թվականի №27Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի №39Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի №352Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ԲԱԲՈՒԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2007 թվականի փետրվարի 9-ի №39Ա որոշմամբ (այսուհետ՝ №39Ա որոշում) «ԲԱԲՈՒԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0064 թույլտվության (այսուհետ՝ №0064 թույլտվություն) գործողության ժամկետը սահմանվել է մինչև 2017 թվականի փետրվարի 9-ը,

բ) հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №352Ա որոշմամբ ընկերությունը պարտավորեցվել է ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ը հաշվարկված 393 775 (երեք հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր յոթանասունհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

գ) Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2015 թվականի փետրվարի 9-ի №ԱՎԴ/0120/04/14 վճռով ընկերությունը սնանկ է ճանաչվել,

դ) ընկերությունը 2017 թվականի փետրվարի 7-ին դիմել է հանձնաժողով՝ №0064 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու խնդրանքով,

ե) ընկերությունը մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ը հաշվարկված պարտավորության գումարից փաստացի կատարել է 100 000 (հարյուր հազար) դրամ վճարում, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 13-րդ հոդվածը, 17.1 հոդվածը, «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել №39Ա որոշմամբ ընկերությանը տրամադրված №0064 թույլտվության գործողության ժամկետը՝
   1) №39Ա որոշման 1-ին կետում «10 տարի» բառերը փոխարինելով «մինչև 2027 թվականի փետրվարի 9-ը» բառերով.
   2) №39Ա որոշման հավելվածի՝ №0064 թույլտվության պայմանների 2.2 կետում «տրվում է 10 տարի ժամկետով» բառերը փոխարինելով «գործում է մինչև 2027 թվականի փետրվարի 9-ը» բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի «ԲԱԲՈՒԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախակա-նությունների օգտագործման պարտադիր վճարների և հաշվարկված տույժերի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցումը պարտավորեցնելու մասին» №352Ա որոշումը:

3. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում 900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով մինչև 2017 թվականի փետրվարի 8-ը հաշվարկված 209 000 (երկու հարյուր ինը հազար) դրամ պարտքը, որից 200 000 (երկու հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 9 000 (ինը հազար) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար մինչև 2015 թվականի փետրվարի 9-ը հաշվարկված տույժը:

4. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել հանձնաժողովին՝ վերանայելու այն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի փետրվարի 9-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
8 փետրվարի 2017 թ.